ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

ԶԼՄ-ների սպառումը սփյուռքահայերի շրջանում: Հայկական ԶԼՄ-ների տեղը սփյուռքահայերի առօրյայում

Երևան 2017

Հեռուստատեսություն

Հետազոտության շրջանում նարևառաջ փորձել ենք պարզել, թե ինչ հեռուստալաիքներ են դիտում հարցված սփյուռքահայերն ընդհանուր առմամբ: Հարցվածներն ունեցել են հնարավորություն թվարկելու բոլոր հնարավոր տարբերակները: Ասենք, որ, ըստ դեպքերի հաճախականության, հայկական տարբերակն ամենաշատն է նշվել ՝ 56%: Երկրորդ տեղում ռուսական հեռուստաալիքներն են (անկախ բնակության վայրից), ապա ամերիկյան և բրիտանական: Հարցվածները տարբերակներում նշել են նաև իրենց բնակության երկրի հեռուստաալիքները, որոնք ցածր տոկոսային ցուցանիշ ունենենալու պատճառով չեն դիտարկվել: Հարցի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Հարցին, թե որ հեռուստաալիքներն են դիտում ընդհանուր առմամբ, հարցվածների մեծամասնությունը նշել է Արմենիա հեռուստաալիքը՝ 38% հանդիպող դեպքերով:

Առաջին ալիքը չորրորդ տեղում է՝ ըստ դեպքերի 29%: Հարցի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 2-ում: Հարցվողները հնարավորություն են ունեցել նշելու մի քանի տարբերակ, ուստի պատասխանների տոկոսային հանրագումարը 100% չէ:



Գծապատկեր 2

Անդրադառնալով հայկական հեռուստաալիքներին՝ ասենք, որ հարցված սփյուռքահայերի 26%-ը նշել է, որ ամեն օր դիտում է հայկական հեռուստաալիքներ: Շաբաթը մեկից երկու անգամ հայկակն ալիքներ դիտում է հարցվածների 16%-ը: Ավելի քիչ է ամիսը մեկից երկու անգամ դիտողների տոկոսային ցուցանիշը՝ 6%:

30% հարցվածներ նշել են, որ հայկական հեռուստաալիքներ դիտում են ավելի հազվադեպ: Հարցված սփյուռքահայերի 22%-ը նշել է, որ չի դիտում հայկակա հեռուստաալիքներ (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3

Հարցին թե հայկական որ հեռուստաալիքներն են դիտում, ըստ դեպքերի, ավելի շատ հանդիպող տարբերակը Արմենիա հեռուստաալիքն է՝ 52%: Երկրորդ տեղում Շանթն է, ապա Առաջին ալիքը: Ըստ դեպքերի առավել քիչ հանդիպողը Երկիր մեդիան է՝ 14%: Կենտրոն հեռուստաալիքը հանդիպում է 18% դեպքերում (Գծապատկեր 4):



Գծապատկեր 4

Թվարկելուց հետո, թե որ հեռուստաալիքներն են դիտում, հարցվածներն առանձնացրել են ամենահաճախ դիտվող հայկական հեռուստաալիքը: Ինչպես երևում է Գծապատկեր 5-ից, հարցվածների մեծամասնության համար ամենահաճախ դիտելի հեռուստաալիքը Արմենիան է՝ 38%, Շանթը՝ 26%, Առաջին ալիքը՝ 22%: Ավելի քիչ դիտվող հեռուստաալիքներ են Կենտրոնը և Երկիր մեդիան:



Գծապատկեր 5

Հայկական հեռուստաալիքներվ դիտվող հաղորդումների շարքում առաջատարը Շանթով հեռարձակվող «Աշխարհի հայեր» հաղորդաշարն է, որը նշվել է հարցվածների 30%-ի կողմից: Երկրորդ ամենահաճախ դիտվող հաղորդումը Առաջին ալիքի «Երգ երգոց» հաղորդումն է. այսպես է նշել հարցվածների 20%-ը: Առաջին ալիքի հաղորդումների նշվել է նաև «Գուշակիր մեղեդին» հաղորդումը: Հարցի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 6

Ասենք նաև, որ հարցվողները նշել են նաև «Մայրիկների ակումբ» և «Մատենադարան» հաղորդումները, որոնք այժմ եթեր չեն հեռարձակվում, ինչը նշանակում է, որ հարցվածները հետաքրքրված են նմանատիպ ձևաչափով հաղորդումներով:

Հարցվածների շրջանում Առաջին ալիքի հաղորդումներից շատ սիրված է «Երգ երգոց» հաղորդումը: Հարցազրույցների ընթացքում հարցվածները հաճախ են տվել նմանատիպ մեկնաբանություններ.

«Ես Սուրիա կապրիմ…շատ մոտ չեմ TV-ին, բայց Հ1-ին կը հետեւիմ ԵՐԳ ԵՐԳՈՅԻՆ»:

Ինչ վերաբերում է սիթքոմներին և սերիալներին, որոնք ցուցադրվում են հայկական հեռուստաալինքերով, հարցվածների շրջանում ամենադիտվողը «Ֆուլ հաուս» սիթքոմն է՝ 39%: Հարցված սփյուռքահայերը հայկական ալիքներով դիտում են նաև հնդկական սերիալներ, որոնք ներկայացված են Գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7

Հարցված սփյուռքահայերը նշել են նաև, որ ունեն լեզվի հասկացման խնդիր, և, ցանկալի կլիներ, հաղորդումներ հեռարձակելիս կիրառել որոշակի ենթատողեր:

"My Armenian isn't good enough to listen or watch Armenian TV. I need English or French subtitles".

Հեռուստատեսությունը համարվում է սփյուռքահայերի համար Հայաստանի մասին տեղեկատվություն ստանալու առաջնային աղբյուրներից մեկը, ուստի հաղորդումներ, սերիալներ պատրաստելիս հարկ է ուշադրություն դարձնել տրվող ինֆորմացիայի բնույթին Հայաստանի մասին ճիշտ և օբյեկտիվ պատկերացում ձևավորելու համար: Հարցվածներից մեկը նշել է.

«Տատիկս ամբողջ օրը հայկական սերիալներ է նայում ու մեզ չի թողում գանք Հայաստան, որովհետև Հայաստանում իրրա սպանում են, թալանում, աղջիկներին էլ բռնաբարում. Վախենում է, որ գանք Հայաստան, մեզ հետ էլ նման բաներ կպատահեն»:

Աղջիկ, 28 տարեկան, ԱՄՆ

Ռադիո

Եթե խոսենք հարցված սփյուռքահայերի ռադիո լսելու հարցի շուրջ, ապա ասենք, որ հայկական ռադիո լսում է հարցվածների ընդամենը 32%-ը (Գծապատկեր 8):



Գծապատկեր 8

Նշենք, որ ի տարբերություն 2016 թվականի, հայկակaն ռադիո լսողների թիվը մեծացել է՝ 25%-ից դառնալով 32%: Հարցվածներից, ովքեր նշեն են, թե լսում են հայկական ռադիո, Հանրային ռադիո լսում է ընդամենը 28%-ը:



Գծապատկեր 9

Եթե դիտարկենք հայկական ռադիո լսողների և Հանրային ռադիոյի լսելիության դինամիկան 2016-2017 թվականների ընթացում, ապա ասենք, որ Հանրային ռադիոյի լսելիությունը սփյուռքահայերի շրջանում կտրուկ նվազել է՝ 63%-ից դառնալով 28% այն դեպքում, երբ հայկական ռադիոլսողների թիվը աճել է: Հարցի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 10-ում:



Գծապատկեր 10

Հանրային ռադիոյի հաղորդումների անվանումները սփյուռքահայերի շրջանում հիշվող և տպավորված չեն: Միայն հաղորդումների անվանումները հուշող հարցից հետո հարցվածները կարողանում են մտաբերել որոշակի անուններ: Նշվել են որոշ անուններ, սակայն մեկ-երկու հարցվածների կողմից՝ «Մենք և մեր բառերը», «Մեծանուն հայեր», «Հայկական գաղթօջախներ», «Հայ թեք», «Վերնատուն», «Առավոտը հանրայինում», «Ստատուս Քվո»:

☺